


Գիտություն



ՓԵՏՐՎԱՐ
2
(243)
2012 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Վերընարվեցին իրենց պաշտոններում

Վերջերս ՀՀ ԳԱԱ նախագահությունը իր նիստերում միաձայն վերընտրեց ՀՀ ԳԱԱ մի շարք ինստիտուտների տնօրեններին:

ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Յարուկունյանը: Նա ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2006 թ.-ից: Վլադիմիր Յարուկունյանն ավելի քան 75 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ 7 գրքի համահեղինակ:

ՀՀ ԳԱԱ Յարուկունյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց պատմական գիտությունների թեկնածու Յայկ Դեմոյանը: Նա թանգարան-ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2006 թ.-ից: Յայկ Դեմոյանը 40 աշխատությունների հեղինակ է, որոնցից 8-ը՝ մենագրություն: Յայկ Դեմոյանի հիմնական աշխատությունները նվիրված են Ղարաբաղյան հակամարտությանը, Թուրքիայի և Ադրբեջանի նորագույն պատմությանը, ազգային ինքնությանը:

ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գի-

տությունների դոկտոր Վահրամ Յակոբյանը: Նա ինստիտուտի տնօրենի պաշտոնում աշխատում է 2006 թ.-ից: 65 գիտական հոդվածի և 1 մենագրության հեղինակ է: Վահրամ Յակոբյանը զբաղվում է առաձգականության և առաձգամածուցիկության մաթեմատիկական տեսությամբ, կոնտակտային և խառը եզրային խնդիրներով, հոծ մարմիններին բարակապատ տարրերից ուժի փոխանցման հարցերով, քայքայման մեխանիկայով, սինգուլյար ինտեգրալ հավասարումների կիրառություններով, մաթեմատիկական ֆիզիկայի հատուկ ֆունկցիաներով:

ՀՀ ԳԱԱ Մ. Գ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց տեխնիկական գիտությունների դոկտոր Նիկոլայ Կոնյալանը: Նա ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2006 թվականից: Նիկոլայ Կոնյալանը 173 գիտական հոդվածների և հեղինակային վկայագրերի, 2 ուսումնական ձեռնարկի հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Բոյաջյանը: Նա ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2006 թվականից: Աննա Բոյաջյանը 270 գիտական աշխատությունների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինս-

տիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր Իրինա Մեխիսեթյանը: Նա 127 գիտական աշխատությունների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Արտակ Մկրտչյանը: Ինստիտուտի տնօրենի պաշտոնը նա զբաղեցնում է 2006 թ.-ից: Նա 80-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ է: Արտակ Մկրտչյանը Ամերիկյան քիմիական ընկերության, ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների կենտրոնների հետ Յայ-ռուսական հանձնաժողովի անդամ է, ՌԴ Պրոխորովի անվան ճարտարագիտական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Յայկ Յարուկունյանը: Նա աստղադիտարանի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2004 թ.-ից: 54 գիտական աշխատությունների հեղինակ է: Յայկ Յարուկունյանը Միջազգային աստղագիտական միության, Եվրոպական աստղագիտական ընկերության անդամ է, ՄԱՄ-ի «Աստղագիտական կրթություն» հանձնաժողովի ներկայացուցիչ:

Սարկոզին պատրաստ է ներկայացնել նոր օրինագիծ, եթե...

Ֆրանսիայի պրեզիդենտ Նիկոլա Սարկոզին վճռականորեն է տրամադրված, և եթե Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչի օրինագիծը Յայկ Գեղասպանության ժխտումը քրեականացնելու վերաբերյալ, ապա ինքը պատրաստ է ներկայացնել նոր օրինագիծ:

Այս մասին Ֆրանս Պրեսին հաղորդեցին Ֆրանսիական նախարարները: Այս հայտարարությունը Սարկոզին արել է Ֆրանսիայի նախարարների խորհրդի նիստում:

Սարկոզին միաժամանակ քննադատել է այն նախարարներին, որոնք դեմ են հայտնի օրինագծին, և որոնց թվում են արտաքին գործերի նախարար Ալեն Ժյուսկենը, մթերումների, գյուղատնտեսության և ձկնորսության նախարար Բրունո Լեմերը՝ հայտարարելով, որ «նրանք իրենց ականջներից այն կողմ ոչինչ չեն տեսնում և չեն ցանկանում տեսնել անցյալը»:

Նիկոլա Սարկոզին միաժամանակ հայտարարել է, թե Սահմանադրական խորհրդի կողմից օրինագծի մերժումը կստիպի վերանայել նաև Դոկտրինայի մերժումը՝ քրեականացնող օրենքը:

Ի դեպ, Ֆրանսիայի իրեաների միության ներկայացուց-

չական խորհրդի հետ հանդիպման ժամանակ, կրկին անդրադառնալով Յայկ Գեղասպանությունը քրեականացնող օրենքին, Ֆրանսիայի նախագահը նշել է. «Թուրքիան մեծ պետություն է: Սակայն իրապես հզոր լինելու համար յուրաքանչյուրը պետք է նայի իր պատմությանը: Պետք է նայել պատմության ինչպես մութ, այնպես էլ լուսավոր հատվածներին:

Թուրքիայի համար ավելի պատվաբեր կլինի վերանայել սեփական պատմությունը: Մենք դա Թուրքիային ասում ենք որպես ընկեր պետություն:

Այո, մենք թույլ չենք տալիս ժխտել ցանկացած ցեղասպանություն: Այստեղ ոչ թե նախընտրության, այլ համոզմունքների խնդիր է»:

Ի դեպ, սեփական պատմությունը նայելու համար պետք չէ հեռու գնալ, այլ պարզապես ժամոքանալ հայ նշանավոր պատմաբանի նոր ուսումնասիրությանը, որը նվիրված է անցյալ դարասկզբի ստամբուլյան դատավարություններին, որտեղ թուրքական դատարանը երիտթուրքերի ոճրագործությունները բնութագրեց որպես ծրագրված ցեղասպանություն:

Պրոֆ. Վահագն Տատրյանը թուրքերին առերեսում է իրենց պատմության հետ

Ինչպես հաղորդել է Կանադայում գործող «Ձորյան ինստիտուտը»՝ փետրվարի 10-ին տեղի Յայ բարեգործական ընդհանուր միության կենտրոնում տեղի է ունեցել պրոֆ. Վահագն Տատրյանի դասախոսությունը «Յայկ Գեղասպանությունը իրականացնողների դատավարությունների նշանակությունը» թեմայով:

Յետպատերազմյան զինվորական հատուկ տրիբունալները հստակորեն և իրավական բնութագրամբ ցույց տվեցին, որ երիտթուրքերի առաջնորդների մտադրությունը ցեղասպանություն իրագործելն էր երկրի հայ քաղաքացիների դեմ: Տատրյանը ներկայացրել է իր նոր գիրքը «Դատավարություն Ստամբուլում» խորագրով, որը նա գրել է Թաներ Աբչամի համահեղինակությամբ:

Գիրքը, որի պատրաստման համար տասնմեկ տարի է պահանջվել, առաջին անգամ անգլերեն լեզվով հանրությանն է ներկայացնում դատավարության իրավական փաստաթղթերը:

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ նոր գրքի՝ «Յայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» մենագրության շնորհանդեսը

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի ղախվածում տեղի ունեցավ պատմական գիտությունների դոկտոր Հասմիկ Ստեփանյանի հեղինակած «Յայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» մենագրության շնորհանդեսը: Գիրքը նվիրված է Թուրքիայի Հայոց պատրիարքարանի հիմնադրման 550-ամյա հոբելյանին (1461-2011 թթ.):

Մենագրությունը ներկայացնում է Օսմանյան կայսրության պալատական, դիվանագիտական, վարչական, դատական, զինվորական բնագավառ-

ներում, բանակում ու նոր զարգացող բուրժուական հարաբերությունների մաս հանդիսացող բանկային, արդյունաբերական, ապահովագրական համակարգերում, ինչպես նաև բժշկության, քաղաքաշինության, արհեստների, առևտրի, գիտության, ճարտարապետության, կերպարվեստի, լուսանկարչության, քաղաքի, երաժշտության, կիրառական արվեստների, սպորտի, հասարակական կազմակերպությունների ոլորտներում ու երկրի տնտեսության համար նոր ձևավորվող կարևորագույն ճյուղերում արևմտահայության ունեցած մեծազույց ներդրումը:

Այս աշխատությունը կոչված է լրացնելու մեր պատմության բազմաթիվ ճեղքվածքները, վերաբերվելու և թուրքացման, խեղաթյուրման սպառնալիքից փրկելու մեր մշակույթի մի կարևոր և անքակտելի մասը: Այն կարող է հիմք ծառայել բազմաթիվ նոր ուսումնասիրությունների համար:

Գրքի հեղինակ Հասմիկ Ստեփանյանի խոսքերով վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարել է մշակույթի

նախարարությանը՝ զբաղվել գրքի ռեսերեն հրատարակության խնդրով:

«Յայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» մենագրության հեղինակ Հասմիկ Ստեփանյանը շուրջ 40 տարի աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում: Նրա աշխատությունները գլխավորապես նվիրված են հայատառ թուրքերին մշակույթին՝ ձեռագիր, տպագիր գրականությանը, պարբերական մամուլին, նրա երախտավորներին, հայ-թուրքական մշակութային հարաբերություններին և երկրի տարբեր ասպարեզներում մրանց համագործակցության արժևորմանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն



Սևանի պահպանությունը՝ գերխնդիր

«Գիտություն» թերթի հարցերին պատասխանում է ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր ՄՈՎՍԻՍՅԱՆԸ:

- Պարոն Մովսիսյան, ի՞նչ խնդիրներ են դրված Սևանի հիմնահարցերի հանձնաժողովի գործունեության հիմքում և ինչպե՞ս են դրանք լուծվում:

- ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի աշխատանքային գործունեության հիմքում դրված են Սևանա լճի պահպանման, պաշարների վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև մեր հանձնաժողովի կողմից մշակված և ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի N876 որոշման կատարման համակարգումն ու աջակցությունը:

Անցած երեք տարիների ընթացքում հանձնաժողովի աշխատանքային խմբերի նիստերում կատարվել են Սևանի էկոհամակարգում ստեղծված իրավիճակի մանրամասն վերլուծություններ, վեր են հանվել հիմնական թերություններն ու դրանց ծնող պատճառները, մատնանշվել են լճի բնական պաշարների պահպանման, վերականգնման, վերարտադրության, բնականոն զարգացման և օգտագործման հիմնական ուղիները:

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի մշակած առաջարկությունները ՀՀ նախագահի հանձնարարականով ուղարկվել են ՀՀ կառավարություն՝ շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկելու և համապատասխան ծրագիր կազմելու նպատակով:

ՀՀ կառավարությունը 2010 թվականի հունիսի 24-ի N876-Ն որոշումով հաստատել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և հանձնաժողովի գործունեությունը ներկայացված միջոցառումների ժամանակացույցը:

Հաստատված ժամանակացույցով նախատեսվում է իրականացնել թվով 43 միջոցառումներ, որոնց համար մոտակա տարիներին ֆինանսավորման տարբեր աղբյուրներից կհատկացվի ավելի քան 44 մլրդ դրամ:

Ուզում եմ հատուկ ընդգծել, որ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումը վերջին 30 տարիների ժամանակահատվածի համար ամենախաղեպես է թե՛ իրականացվելիք միջոցառումների կարևորությամբ և թե՛ ֆինանսավորման ծավալների առումով:

Հանձնաժողովը, ՀՀ համապատասխան նախարարությունները, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհուրդը և ՀՀ Ֆեդերացիայի մարզպետարանը ծավալուն գործնական աշխատանք են կատարել հանձնաժողովի 2011թ. աշխատանքային ծրագրով, ինչպես նաև ՀՀ կառավարության N 876 որոշմամբ նախատեսված Սևանի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված հիմնահարցերի լուծման ուղղությամբ: Արդյունքում իրականացվել են մի շարք կարևորագույն միջոցառումներ:

- Պարոն Մովսիսյան, ինչպես դուք նշեցիք, հիմնական խնդիրներից է լճի մակարդակի բարձրացումը: Ի՞նչ է արվել այդ ուղղությամբ:

- Լճի մակարդակի բարձրացման ուղղությամբ արվել է հետևյալը՝

* «Արփա-Սևան» ՓԲԸ-ի կողմից դրական աշխատանք է կատարվում Աբու-Դաբի Չարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում թունելի վթարային հատվածների վերականգնման ուղղությամբ: 2011 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ի-

րականացված է թունելի 282 գծամետր երկարությամբ հատակի և 462 գծամետր երեսարկի վերականգնման աշխատանքներ՝ 2432 մլն դրամ արժեքով: Այս ծրագիրը կավարտվի 5 տարիների ընթացքում և կապահովի թունելի անխափան գործունեությունը:

* Որոշակի դրական աշխատանք է կատարվել Սևանից ոռոգման նպատակով ջրի բացթողումները կարգավորելու և նվազեցնելու գործում: Անցած երեք տարիների ընթացքում Սևանա լճից (միջին տարեկան կտրվածքով) բաց է թողնվել 150 մլն. խմ. ջուր, նախորդ երեք տարիների միջինի 203 մլն. խմ. դիմաց:

* Սևանից բաց թողնվող ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու նպատակով Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ծրագրի շրջանակներում արդեն ավարտվել են՝

ա) Արտաշատի, Արզնի-Շամիրամի և Ստորին Հրազդանի մայր ջրանցքների առաջին և երկրորդ հերթերի



37.5 կմ հատվածներում վերականգնման աշխատանքները: Ծրագրի արժեքը կազմել է 7290 մլն դրամ:

բ) Արզնի-Շամիրամի, Ստորին Հրազդանի, Արտաշատի և Կոտայքի ոռոգման համակարգերից սնվող 3-րդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքները որոնց արժեքը կազմում է շուրջ 1,7 մլրդ դրամ:

գ) Արարատյան հարթավայրում ոռոգելի երկրագործության զարգացման և արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, հարթավայրի կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի կարգավորման և կատարելագործման աշխատանքները (7.5 մլրդ դրամ), ինչպես նաև Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների վերականգնման աշխատանքները (5.6 մլրդ դրամ):

* Ավարտին է մոտենում Մարմարիկի ջրամբարի շինարարությունը, որում նախատեսվում է ամբարել 23 մլն. խմ ջուր, որը կնպաստի Սևանից ոռոգման նպատակով բաց թողնվող ջրի ծավալների նվազեցմանը:

Վերը թվարկած միջոցառումների իրականացման, ինչպես նաև կլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ Սևանի մակարդակը 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2011 թվականի նույն ժամանակամիջոցի համեմատությամբ բարձրացել է 23 սմ: Ընդհանրապես 2002 թվականից առ այսօր Սևանի մակարդակը բարձրացել է 3մ 80սմ-ով, որից վերջին երեք տարիներին՝ 1մ 28սմ-ով:

- Պարոն Մովսիսյան, այսօր հարցերի հարցը մաքուր քաղցրահամ ջուր ունենալն է: Անցյալ տարի ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել այդ ուղղությամբ:

- Նախ և առաջ հանձնաժողովի կողմից մշակվել է «Սևանա լճի էկոհամակարգի և ջրաբանական մոնիտորինգի համալիր ծրագիրը»: Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

Ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը հնարավորություն է ստեղծում Սևանա լճում և ավազանի գետերում էֆտրոֆացնող, տոքսիկ և աղտոտող նյութերի չափաքանակները վերահսկելու ժամանակակից էկոլոգիական մոնիտորինգային ցանց ձևավորելու, Սևանի ավազանի օդում, ջրում և ցամաքում ընթացող պրոցեսները կառավարելի դարձնելու, հսկայածավալ կապիտալ ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու և այդ կերպ ջրի որակը բարելավելու ուղղությամբ:

* Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում

Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքներում կառուցվել է 26 կմ կոյուղագիծ 3.2 մլրդ դրամ գումարով: Գերմանական «Լյուդվիգ Պֆեյֆեր» ընկերությունը սկսել է Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում մաքրման կայանների կառուցման աշխատանքները՝ ծրագրով նախատեսված բոլոր տեղամասերում: Կոյուղագծերի և մաքրման կայանների կառուցման մրցույթների արդյունքում տնտեսվել է մոտ 2.6 մլն եվրո գումար, որը առաջիկայում կօգտագործվի ծրագրում ներառված քաղաքներում լրացուցիչ 20կմ կոյուղացանցների կառուցման համար: Արդեն իսկ լրացուցիչ կառուցվել է 11 կմ կոյուղագիծ:

* ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից շարունակվում են բանակցությունները Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի հետ Սևանի ավազանի մյուս խոշոր բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագրի մշակման ուղղությամբ:

* Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված առաջարկությունների հիման վրա մշակվել է 2011թ. ՀՀ պետական բյուջեի շրջանակներում «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագիրը, ըստ որի 2011թ. ընթացքում մաքրվել է 275 հա անտառածածկ տարածք, որից 205 հա «Վաթերմաստեր» մեքենայի միջոցով:

* Մշակվել է «Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտերի հիմնման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է Սևանա լճի շրջակայքում հիմնել 1108 հա անտառաշերտեր: Որոշման նախագիծը 2012թ. առաջին կիսամյակում կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

* Մշակվել է Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղափոխման գլխավոր ուղղագիծը և արժանացել ՀՀ կառավարության հավանությանը: Ուղղագիծով նախատեսված միջոցառումների իրականացումը հնարավորություն կստեղծի լուծել լճի ավազանում կենցաղային աղբի հավաքման, տեսակավորման, տեղափոխման, վնասագերծման ու վերամշակման խնդիրները:

* Ճշգրտված են բոլոր շենք-շինությունների սեփականատերերի և ինքնակամ կառուցողների անվանական ցուցակները: Ընթացքի մեջ են մինչև 1900.25 մ բացարձակ նիշը ջրում գտնվող և ջրածածկվող 528 շենք-շինությունների քանդման, ապամոնտաժման և տեղափոխման աշխատանքները: 2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ապամոնտաժված ու տեղափոխված են 345 շենք-շինություններ, ապամոնտաժման փուլում են գտնվում թվով 5 շենքեր: Սնացած շենք-շինությունների ապամոնտաժման և տեղափոխման աշխատանքները շարունակվում են:

* Հանձնաժողովի առաջարկությամբ և ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ակտիվ միջամտությամբ մեկնողմիշտ փակվեց Արարատի ոսկու գործարանը Սոսը տեղափոխելու հարցը, որը մաքուր ջուր ունենալու կարևորագույն երաշխիքներից մեկն է:

* Հանձնաժողովը չափազանց կարևորում է Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների վնասագերծման խնդիրը: Սևանա լճի ջրհավաք ավազանում պահուստային (լքված) հանքավայրերի գույքագործման նպատակով ստեղծվել է զննատեղ հանձնաժողով, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անց է կացրել մրցույթ: Մրցույթում հաղթող «Ստեփրիկ» ՍՊ ընկերությունն ավարտել է պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները և դրանց վերաբերյալ ներկայացրել է ամփոփ հաշվետվություն:

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի կողմից պարբերաբար դիտարկումներ են իրականացվում և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են կոնկրետ միջոցառումներ: Մասնավորապես դիտարկվել և առաջարկություններ է ներկայացվել ջրավազանում շահագործվող Սոսքի ոսկու հանքավայրի ջարդիչ-տեսակավորող և Շորժայի բրոմ պարունակող հանքավայրի արտադրամասերի վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները տեղում ծանոթացել են «Գեո Պրո Մայնինգ Գոլդ» ընկերության կողմից կառուցվող ջարդիչ-տեսակավորող արտադրամասի նախագծային նախնական փաստաթղթերի և շինարարության ընթացքի հետ: Արդյունքում պարզվել է, որ արտադրամասը կառուցվում է սկսած 2011թ. փետրվարի 15-ից, առանց սահմանված կարգով հողատեղացման և նախագծային փաստաթղթերի հաստատման: Հանձնաժողովը առաջարկել է ՀՀ ներգետնիկայի և բնական պաշարների նախարարին դադարեցնել ջարդիչ տեսակավորող արտադրամասի շինարարությունը մինչև սահմանված կարգով նախագծի կազմումը, նախագծի բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության անցկացումը, ինչպես նաև կառույցի հողատեղացման խնդրի լուծումը:

(Շարունակելի)

Հարցազրույցը վարեց
ԱՆՐ ԿԱՐԴԱՆՅԱՆԸ



ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ
ԳԱԱ սփյուռքի բաժինը

Վարդան Գրիգորյանը ծնվել է 1934 թ. ապրիլի 8-ին, Իրանի հյուսիսային շրջանում՝ Երբեմնի հայաշատ թավրիզ քաղաքում: Նա ունեցել է ծանր մանկություն, դժվար պատանեկություն: Պապիկը, ում ծեղրակալել էին քաղաքական մեղադրանքներով, մահացավ բանտում, մայրը՝ Շուշանիկ Միրզայանը 26 տարեկան հասակում մահացավ թոքաբորբից, երբ ինքը դեռ 6 տարեկան էր: Հայրը՝ Սամվել Գրիգորյանը, ով հաշվապահ էր աշխատում անգլո-իրանական նավթային գործարանում, Վ. Գրիգորյանի բնութագրմամբ «ֆիզիկապես և հոգեպես շատ հեռու իրենից»: Վարդան Գրիգորյանը և նրա քրոջ՝ Եվգենիայի (Օժիկի) դաստիարակությամբ զբաղվել է մայրական տատը՝ Ոսկին, ով երեխաներին մեծացրել էր մեծ սիրով և քնքշանքի մեջ: Չլի-նելով գրաճանաչ՝ տատիկը լեզվաբանների ու հեքիաթների միջոցով երեխաների մեջ սերմանում էր ինքնասիրության և պատվի սերմեր: Տատիկի գլխավոր խորհրդին Վարդան Գրիգորյանը հետևում է մինչև այսօր. «մարդուց հետո մնում է միայն նրա բարի ամուլը և բարի գործերը»: Տատիկին հաջողվել էր նաև փոքր հասակից սեր սերմանել առ կրթությունը:

Նա մեծացել է ընչազրկության, զրկանքների մեջ, սակայն մեծ հիացմունքով է խոսում թավրիզի հայկական թաղամասի մասին: Վարդանը կարողացավ դիմագրավել ճակատագրի հարվածներին շնորհիվ իր ըն-



Հանրային գրադարանը՝ դա հենց Նյու Յորքն է, այն ազգային հարստություն է, գրադարանի հետազոտական ֆոնդերն անգին են, այն պետք է ավելի լավ ուսումնասիրվի, առավել գնահատվի, խորապես հարգվի և պետք է գտնվի առավել լավ պայմաններում»: Նա մեծ հաջողությամբ վերականգնեց գրադարանի հեղինակությունը և նրա դերն ամերիկյան մշակութային կյանքում: Շուտով Գրիգորյանը ստանում է Բրաունի համալսարանը ղեկավարելու առաջարկ:

Գրիգորյանին հաջողվեց ոտքի կանգնեցնել Նյու Յորքի հանրային գրադարանը և այն հանձնեց վստահելի անձանց: «Նյու Յորք Թայմս» թերթը Գրիգորյանի հեռանալու կապակցությամբ գրեց մի մեծ հոդված՝ «Նյու Յորքը կորցնում է Առյուծին» վերտառությամբ: Թերթում գրված էր. «Գրիգորյանը մեզ տվեց Ֆլորենցիան, Աթենքը և Կարթագենը, և մենք խոնարհվում ենք նրա հոյակերտ ընծաների առջև»:

Նրա կատարած աշխատանքը գրադարանում արժանացավ բարձր գնահատականի: ԱՄՆ-ի նախագահ Բիլլ Բլինթոնը նրան շնորհեց «Ազգային հումանիտար գիտությունների» մեդալ: Ազգային գրադարանի վերականգնման համար ընթերցասրահը կոչեցին Գրիգորյանի անունով:

1988 թ. օգոստոսի 31-ին Գրիգորյանը հայտարարվեց Բրաունի համալսարանի 16-րդ նախագահը: Նրա ղեկավարած ինքը տարիների ընթացքում Բրաունի համալսարանը արձանագրեց որակական նոր վերելք, բարելավվեց կրթական այդ հաստատության ֆինանսական վիճակը:

1997 թ. Գրիգորյանին արվում է այնպիսի առաջարկ, որ նա չէր կարող հրաժարվել՝ դառնալ Նյու Յորքի Կարնեգի կոնսերվատիվ 12-րդ նախագահը:

Կարնեգի կենտրոնը, որը հիմնվել է Էնդրյու Կարնեգիի կողմից 1911 թ., նպատակ է հետապնդում բազմակողմանի աջակցություն ցույց տալ պետություններին, քաղաքական կուսակցություններին և առանձին անհատներին, որպեսզի նրանք ճիշդ գործադրեն հանուն աշխարհի խաղաղության և մարդկանց կենսամակարդակի բարձրացման:

Կարնեգի կենտրոնը առաջինն էր, որ կոչ արեց բարելավել նախնական կրթության մակարդակը: Կարնեգի կենտրոնը նպաստում է ուսանողների կրթությանը իրականացնելու հետազոտական աշխատանքներ հումանիտար ոլորտում:

2004 թ. Գրիգորյանը արժանացավ ամենաբարձր քաղաքացիական պարգևին: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը նրան շնորհեց նախագահական «Ազատության» մեդալը:

2003 թ. Գրիգորյանը 2-րդ անգամ այցելեց Հայաստան և Ազգային գրադարանին միկրեց 10.000 դոլար, որպեսզի հոգան գրադարանի կարիքները: Դրա շնորհիվ վերականգնվեց «Վերնատունը» և ձեռք բերվեց բազմացման սարքեր:

Ունենալով բացառիկ կազմակերպչական տաղանդ Գրիգորյանը միևնույն ժամանակ մնում է փայլուն գիտնական, ով գրել է «Իսլամ. խճանկար և ոչ թե մոնոլիտ», «Ժամանակակից Աֆղանստանի ձևավորումը: Քաղաքականության փոփոխականությունը և արդիականացումը 1880-1946 թթ.», ինչպես նաև «Ճանապարհի դեպի տուն: Իմ կյանքը և ժամանակները» կենսագրականը:

Գրիգորյանը հիրավի մեծագույն գիտնական է, պատմաբան, մանկավարժ, մշակութային և հասարակական գործիչ, գերազանց ղեկավար: Ամերիկյան մի պարբերականում նրան բնութագրել էին որպես «Ֆենոմեն», որին ամեն ոք չէ որ արժանանում է:

Հաշվի առնելով Վարդան Գրիգորյանի գիտական և մանկավարժական մեծ ավանդը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ: Իրավամբ, ցանկալի կլիներ, որ Վարդան Գրիգորյանը կարողանար ժամանակ ու հնարավորություն գտնել և այցելել մայր Հայաստան ու խորացնել համագործակցությունը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար ոլորտի ինստիտուտների հետ, ինչը մեծ նպաստ կլիներ Հայաստանում հումանիտար գիտության զարգացման համար:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի
գլխավոր տնօրեն

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

կերների, որոնց հետ նա փողոցում էր անցկացնում գրեթե ողջ ժամանակը, ու նաև ներկա լինելով եկեղեցական պատարագներին և ամերիկյան-վեստերն ֆիլմերի դիտումներով: Բայց մեծագույն հանգրվանը նրա համար գիրքն էր: «Գրքերը փրկեցին ինձ բանտից և տեղափոխեցին հեռավոր, բայց հիասքանչ ու հնարավորություններով լի մի աշխարհ: Աշխարհ, ուր կյանքը հիասքանչ է, արդար է, կրքոտ է, էներգիայով լի է, կարեկցող է և հաճելի է»,-գրում է նա «Ճանապարհի դեպի տուն: Իմ կյանքը և ժամանակները» հուշերում:

Վարդան Գրիգորյանը նախնական կրթությունը ստացել է Իրանում: Նա բավական լավ էր սովորում դպրոցում և շուտով աչքի ընկավ: Վարդան Գրիգորյանի խոսքով իր կյանքում հայտնվեցին օտար մարդիկ, որոնք էլ անշեղորեն փոխեցին նրա ողջ կյանքը: Նրանցից առաջին «օտար», բայց հարազատ մարդը Էդգար Մալոյանն էր, ով այդ տարիներին թավրիզում Ֆրանսիայի փոխիշուպատոսն էր:

1948 թ. Մալոյանը խորհուրդ տվեց Վարդանին մեկնել Լիբանան և շարունակել կրթությունը՝ տալով նրան երեք երաշխավորագիր-նամակ՝ 1-ը Լեբանոնի ներքին գործերի ղեկավարին, 2-ը Հայկական քոլեջի տնօրենությանը, 3-ը այն հյուրանոցին, որտեղ պետք է ապրեր Գրիգորյանը: Կարելի է վստահաբար ասել, որ Մալոյանը դարձավ նրա հովանավորը:

Գրիգորյանի կյանքի մեկ այլ «օտար», բայց մեծ օգնություն ցուցաբերած անձնավորությունը Հրայր Ստեփանյանն էր, թավրիզի ակնոցագործը, ով օգնեց 14-ամյա տղային ձեռք բերել անձնագիր: «Հայրս ասաց, եթե ինքնուրույն կարող ես ձեռք բերել անձնագիր, ապա թույլ կտամ մեկնես: Նա ենթադրում էր, որ 14 տարեկան ոչ մի երեխա չի կարող ձեռք բերել անձնագիր: Ակնոցագործը վերցրեց ինձ իր հովանու ներքո»: Հենց նրա շնորհիվ էր, որ Վարդանը ստացավ անձնագիրը և մեկնեման ծախսերը:

15 տարեկան հասակում նա մեկնեց Բեյրութ (Լիբանան)՝ ուսանելու հայկական լիցեյում: Սկսվում էր անհատի կերտման գործընթացը, որն արդեն անշուշտ լիորեն տանելու էր միայն նորանոր բարձունքներ:

Մեկ տարում նա պետք է սովորեր արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն: Չնչին գումար գրպանում, հաճախ անօթի, նա հաղթահարում էր դժվարությունները և դառնում լավագույն ուսանող ու արժանանում ավարտական ճառ ասելու պատվին: Նա դառնում է Սիմոն Վրացյանի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին վարչապետի, այդ պահին կրթական հաստատության տնօրենի, անձնական խորհրդականը: Ծանոթանում և շատ բան սովորում է Լևոն Շանթից:

Սիմոն Վրացյանը խորհուրդ է տալիս Գրիգորյանին մեկնել Միացյալ Նահանգներ և շարունակել կրթությունը՝ միաժամանակ խոստանալով նյութական օգնություն:

1956 թ. Գրիգորյանը դիմում է ընդունվելու Կալիֆոռնիայի Բերկլի և Սթեֆորդի համալսարաններ: Ճակատագրի բերումով նա սովորում և գերազանց ավարտում է Սթեֆորդի համալսարանը՝ ստանալով բակալավրի աստիճան: Նա մասնագիտանում է պատմության և հումանիտար գիտությունների ոլորտում:

1958 թ. Գրիգորյանը սկսեց աշխատել դոկտորական ատենախոսության վրա, զուգահեռաբար աշխատելով որպես պրոֆեսորի օգնական: Գրիգորյանը փորձում էր դոկտորական ատենախոսությունը պաշտպանել Եվրոպայի և Միջին Արևելքի պատմության վերաբերյալ: Ուսանելու տարիներին հանդիպում է իր ապագա կնոջը՝ Բլերին, ում հետ էլ ամուսնանում է 1960 թ.:

1960-ականների սկզբներին նա արդեն դասավանդում է Սան-Ֆրանցիսկոյի համալսարանում: 1961 թ. Գրիգորյանը Բլերի հետ այցելում են Բեյրութ՝ հանդիպելու Վրացյանի հետ: Հենց այդ օրերին էլ ծնվում է նրանց առաջնեկը՝ Վահե Գրիգորյանը: Որոշ ժամանակ անց լույս աշխարհ եկավ նաև Բաֆֆին:

1969 թ. Գրիգորյանը հրատարակեց իր առաջին մենագրությունը՝ «Ժամանակակից Աֆղանստանի ձևավորումը: Քաղաքականության փոփոխականությունը և արդիականացումը 1880-1946 թթ.», որը բավական բարձր գնահատականի արժանացավ ակադեմիական շրջանակներում: Հենց այդ նույն տարում, պրոֆեսորի հաստիքով Գրիգորյանը հրավիրվեց աշխատելու Տեկսաս Օստինայի համալսարանում: Նրա հեղինակությունը և համբավը տարեց տարի մեծանում էր: 1971 թվականին նրան աշխատանքի են հրավիրում Ֆիլադելֆիայի Փենսիլվանիա համալսարան: 1974 թ. նա արվեստի և գիտության ֆակուլտետի դեկան էր. 1978 թ. սեպտեմբերի 20-ին նրան առաջարկվեց Պենսիլվանիայի համալսարանի փոխնախագահի պաշտոնը: 1979 թ. դեկտեմբերին Գրիգորյանը ստացավ առաջարկ՝ ղեկավարելու Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանը, սակայն հրաժարվեց այդ բարձր պաշտոնից՝ հավատարիմ մնալով իր համալսարանին, քանի որ այդ պահին Փենսիլվանիայի համալսարանում առկա էր լուրջ և չլուծված խնդիրներ: Բնականաբար, այդ խնդիրները լուծելով հանդերձ Գրիգորյանն ակնկալում էր, որ կդառնա Փենսիլվանիայի համալսարանի հաջորդ նախագահը, հատկապես որ ուներ լուրջ համակիրների բանակ: Սակայն 1980թ. նա նախընտրեց թողնել Փենսիլվանիայի համալսարանի փոխնախագահի պաշտոնը, քանզի գտնում էր, որ իր նկատմամբ անարդարացի վերաբերմունք կա և չի գնահատվել իր ողջ ներդրումը Փենսիլվանիայի համալսարանի զարգացման գործում:

1981 թ. Գրիգորյանի առջև բացվում է Նյու Յորքի հանրային գրադարանի դռները: Նրան առաջարկեցին ղեկավարել այդ գրադարանը: Հայտնի է նրա ճառը արդեն որպես գրադարանի նախագահ. «Նյու Յորքի

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեխտա Դուլխանյանը բոլորեց ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը: Այս ծանրակշիռ հոբելյանները նա դիմավորում է հայագիտության բնագավառում ունեցած լուրջ ներդրումով և մանկավարժական մեծ վաստակով:

Ա. Դուլխանյանի կենսագործունեության ոլորտը լայն և ընդգրկուն է. դասախոս, ուսումնական գործընթացի հմուտ կազմակերպիչ, բանասեր, գրականագետ, հայագետ, գրական կյանքի ակտիվ մասնակից:

ԱՆՎԱՆԻ ԸԱՅԱԳԵՏՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեխտա
Դուլխանյանի ծննդյան 70 և
գիտամանկավարժական գործունեության 45-
ամյակի առթիվ)



Դեռևս ուսանողական տարիներին ի հայտ են եկել Ա. Դուլխանյանի անսահման սերն ու հետաքրքրությունները հայ ժողովրդի պատմության ու գրականության նկատմամբ, որն էլ նրան մղել է դեպի գիտության անծայրածիր աշխարհը: 1964-1968 թթ. նա շարունակում է իր ուսումնառությունն ասպիրանտուրայում՝ նշանավոր հայագետ Ասատուր Մնացականյանի գիտական ղեկավարությամբ (վերջինս աշխատում էր Մաշտոցի անվան մատենադարանում)՝ մասնագիտանալով միջնադարյան հայ գրականության հարցերի գծով: Դեռ այդ ժամանակներից սկսած՝ Ա. Դուլխանյանը մշտապես աշխատում է Մատենադարանում, կապվում ձեռագրերի աշխարհի հետ: 1972 թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Ներսես Մոկացի» թեմայով: Այնուհետև նույն բուհում կատարում է ասպիրանտուրայի վարիչի պարտականությունները, ապա 1969-ից անցնում դասախոսական աշխատանքի: Վերջինս նա զուգակցել է գիտաուսումնական գործի կազմակերպչի բարձր ունակություններով, որոնք դրսևորվել են ֆակուլտետին կից մասնագիտացված գիտխորհրդի բարտուղար լինելու տարիներից ու ավելի ընդլայնվել 1990-ից, երբ ընտրվել է ինստիտուտի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Իսկ մինչ այդ՝ 1987 թ., Ա. Դուլխանյանը հրատարակել էր «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ գրականության մեջ» խոստում վերնագրով մենագրություն և այն 1989 թ. պաշտպանել որպես դոկտորական ատենախոսություն: 1990 թ. պրոֆեսոր է:

Միջնադարի հայ գրականության բնագրերի ուսումնասիրությանը զուգահեռ՝ անվանի բանասերը կատարել է բնագրագիտական, տեքստաբանական և ձեռագրագիտական աշխատանք ու հրատարակել Ներսես Մոկացու (1975, 1985) և Խաչատուր Կեչառացու (1988) քննական բնագրերը:

Ա. Դուլխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ գրականության մեջ» աշխատությունը նոր խոսք էր միջնադարյան հայ քննադատության ուսումնասիրության պատմության մեջ: Ողջ միջնադարի համար խիստ կարևոր հոգու և մարմնի խնդիրը, որը սերտորեն առնչվում է ինչպես ոգու և նյութի, կեցության ու մտածողության, բնության ու Աստծու հարաբերության փիլիսոփայական հասկացությունների, այնպես էլ կրոնադիցաբանական նախահիմքերի հետ, աշխատության մեջ արժանացել է մանրագին քննության: Այն առաջին ուսումնասիրությունն էր, ուր ամբողջացված է ինչպես տեսական և փիլիսոփայական, այնպես էլ բանահյուսական և գրական ողջ նյութը պատմական զարգացման փուլերի և ուրիշ ժողովուրդների փիլիսոփայության ու գրականության մեջ եղած համանման երևույթների բացահայտմամբ: Զաջ տիրապետելով նյութին՝ Ա. Դուլխանյանը չի խուսափել համապատասխան զուգահեռներից՝ լինի պարթևական, եգիպտական, ասոր-բաբելական, սլավոնական և այլ գրականությունների հետ:

2009 թ. Ա. Դուլխանյանը հրատարակում է միջնադարի հայ գրականության համեմատաբար քիչ ուսումնասիրված հեղինակներից մեկի՝ XVI – XVII դդ. եկեղեցական նշանավոր գործիչ, փիլիսոփա, բանաստեղծ Ներսես Մոկացու կյանքին և գործունեությանը նվիրված մենագրությունը: Մոկացին այն հեղինակներից է, ով իր ողջ կենսագործունեությամբ ազդել է ժամանակաշրջանի գրական-հասարակական գործընթացի վրա, որի գրական հարուստ ժառանգությունը, սակայն, քիչ էր ուսումնասիրված: Աշխատությունը գրվել է բազմազան սկզբնաղբյուրների, հայագիտական ուսումնասիրությունների, հատկապես ձեռագրական փաստաթղթերի հիմունքներին:

Րուստ Նյուրի հիման վրա: Բովանդակալից և հետաքրքիր սույն ուսումնասիրությամբ Ներսես Մոկացին բնութագրվում է որպես եկեղեցական եռանդուն ու ակտիվ գործիչ, շնորհալի բանաստեղծ, որի հասարակական և գրական կյանքի առաջնությունը է կազմել հայրենիքի, հավատքի և լուսավորության գաղափարները՝ սերտորեն ձուլվելով միմյանց հետ:

Ա. Դուլխանյանն անդրադարձել է նաև հայ հին գրականության խնդիրներին, գրել գիտական մի շարք աշխատություններ: Դրանցից առավել ուշագրավը «Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» (2004) ուսումնասիրությունն է:

Երկար տարիներ դասախոսական աշխատանք կատարելով՝ անվանի գիտնական-մանկավարժը գիտակցել է դասագրքերի և ուսումնական ձեռնարկների նշանակությունն ու կարևորությունն արդի ուսումնական գործընթացում և գրել է մի շարք աշխատանքներ. «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» (2006), «Հայ գրականության տեսություն» (2006), «Հայ գրականության պատմություն (հին և միջնադարյան գրականություն)» (2006), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (2008), «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից» (2009):

Անուրանալի է Ա. Դուլխանյանի ավանդը հայագիտության բնագավառում: Հայտնի իրողություն է, որ վերջին դարերում հայագիտությունը բուռն ծաղկում ապրեց Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, նաև՝ Ռուսաստանում՝ Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող հայագիտական կենտրոններով: Եվրոպացի հայագետները սերտ կապերի մեջ էին Վենետիկի, Վիեննայի Մխիթարյան միաբանությունների անդամների, Կ. Պոլսի, Թիֆլիսի ու Էջմիածնի նշանավոր հայագետների հետ: Գիտական ահա այս կարևորագույն շարժման երախտակորներին ու նրանց թողած գիտական ժառանգության վերհաման է Ա. Դուլխանյանը նվիրել 2000 թ. իր հիմնադրած «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը: Միջնադարը, հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը եվրոպացիներին ու աշխարհին ներկայացնող հայագետներից այդ մատենաշարով նա արդեն հրատարակել է վեց ուշագրավ աշխատանք: Այսօր ընթերցողի սեղանին է դրված «Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագրությունը» (2001), «Մարի Ֆելիստե Բրոսսեն հայագետ» (2002), «Վիկտոր Լանգուան հայագետ» (2003), «Էդուարդ Դյուլորին հայագետ» (2004), «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» (2008), «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» (2011) մենագրությունները: «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի գրքերն ամբողջովին նորություն են և արժանի են թարգմանվելու եվրոպական, նաև ռուսերեն լեզուներով, որով հետև դրանցում առաջ են քաշվում կենսական այնպիսի հարցադրումներ, որոնք հրատապ ու արդիական են հայագիտության համար: Ի դեպ, այս շարքին կարելի է դասել Ա. Դուլխանյանի «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (2005) աշխատությունը՝ նվիրված հայոց այբուբենի ստեղծման 1600-ամյա հոբելյանին:

Առանձնահատուկ են Ա. Դուլխանյանի վերաբերմունքն ու մոտեցումները ժամանակակից գրականության տարաբնույթ խնդիրներին, հայ պոեզիայի դրսևորումներին, որոնց արձագանքել է գրաքննադատական տասնյակ հոդվածներով ու մի շարք գրքերով:

Անվանի գրականագետի լայն մտափորձգուն վկայությունն է նաև նրա ծավալած թարգմանչական գործունեությունը, որը խաթարված է ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի քաջ իմացության վրա: Հիշատակենք բնագրերից նրա կատարած բարձրակարգ և

հմուտ թարգմանությունները Պ. Ռոնսարի, Թալի ղը Մոլենի, Ս. Քոզեմի, Ջ. Քոլինգի, Ռ. Դոմենիկի ստեղծագործություններից: Գիտական մեծ հետաքրքրություն և արձագանք ունեցան Ավետալի «Վեցդիպտոս» գրքի հատվածների թարգմանությունը ֆրանսերենից:

Մի ուրույն բնագավառ է նաև Ա. Դուլխանյանի գրաքննադատական հոդվածները (գրախոսություններ) և գիտության ու մշակույթի մեր երախտավորների մասին գրած բովանդակալից հոդվածները, որոնք առանձնանում են իրենց խորքային դիտարկումներով ու դրսևորումներով, սիրով ու ջերմությամբ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ նշենք, որ Ա. Դուլխանյանը 24 գրքի և գիտական շուրջ 300 հոդվածի հեղինակ է: Նրա աշխատանքները լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն լեզուներով:

Ա. Դուլխանյանը մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների, հանդես եկել ուշագրավ ու բովանդակալից զեկուցումներով, այդ թվում արտերկրներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում:

Հայտնի իրողություն է, որ Ա. Դուլխանյանը մեծ էրուդիցիայի տեր, անհանգիստ և պրպտող բնավորություն ունեցող անձնավորություն է. արտերկր կատարած բազմաթիվ ուղևորություններից հետո նա իր տեսածն ու վերապրածն իր համար չի պահել, այլ մշտապես հանդես է եկել ելույթներով, զեկուցումներով, ճանաչողական և տեղեկատվական բնույթ ունեցող հոդված-ակնարկներով, որոնք հարստացնում են մեր գիտելիքները:

Այս բնույթի նրա աշխատանքները խոսում են գիտնականի քաղաքացիական և ազգային հստակ նկարագրի մասին:

Ա. Դուլխանյանը գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործի վարպետ է, մեծ աջակցություն է հանդես բերում երիտասարդ կադրերի պատրաստման ու դաստիարակման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի թեկնածուական ատենախոսություններ, եղել է դոկտորական բազմաթիվ ատենախոսությունների ընդդիմախոս: Մանկավարժական համալսարանի նրա ղեկավարած ամբիոնը ատենախոսությունների պաշտպանության առաջատար կազմակերպությունների շարքում գրավում է առաջնակարգ տեղ:

Ա. Դուլխանյանը գիտությունների ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսի» և «Գրական թերթի» խմբագրական խորհուրդների ամենակատիվ անդամներից է, ՀՀԳԱ-ի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտական խորհուրդների, ԵՊՀ կառավարման խորհրդի անդամ է:

Ա. Դուլխանյանի անցած ճանապարհը, փորձն ու գիտելիքները, սկզբունքայինությունն ու անաչառությունը հաշվի առնելով՝ երկար տարիներ նրան վստահվել է հանրապետական դպրոցական օլիմպիադաների՝ հայ գրականության գծով գործող խորհրդի նախագահի պատասխանատու պարտականությունը, աշխատանք, որը նա կատարել է մի առանձնակի սիրով ու նվիրումով:

Ա. Դուլխանյանը եռանդուն մասնակցություն է ունենում մեր երկրի հասարակական-գրական-մշակութային կյանքին, որի համար էլ արժանացել է մի շարք պարգևների ու գրական մրցանակների. գիտամանկավարժական բնագավառում ունեցած ներդրման համար 2003 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացի մեդալով, 2008-ին «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» մենագրության համար արժանացել է Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղբալյան» մրցանակին, «Ֆ. Նանսենի ոսկե հուշամեդալի», ՀՀԳԱ «Գրական վաստակի համար» և «Խաչատուր Աբովյան» մեդալների:

2010 թ. գրականագիտության բնագավառում ունեցած մեծ ներդրման համար Ա. Դուլխանյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հարկ ենք համարում հատուկ նշել հայագետի անմնացորդ նվիրումը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին, որտեղ ուսանել, աշխատել և կրթել է տասնյակ սերունդներ, իր ողջ գործունեությամբ նպաստել բուհի, նրա կոլեկտիվի ու սաների բարի համբավի պահպանմանը:

Բոլորին քաջ հայտնի է, որ Ա. Դուլխանյանն ապրում է ստեղծագործական բուռն ու լեցուն կյանքով, գտնվում է իր գիտական կյանքի ծաղկուն շրջանում, և մեր հասարակությունը, իրավամբ, նրանից նորանոր սպասելիքներ ունի:

Սրտանց շնորհավորելով մեր գործընկերոջ՝ հայագիտության մշակ ու վաստակաշատ մանկավարժ Ալեխտա Դուլխանյանի հոբելյանը՝ մաղթում ենք նրան առողջություն, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք և երկար տարիների կյանք:

Անուշավան ԶԱԶԱՐՅԱՆ

«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

Կառուցվածքների սեյսմակայունության և սեյսմակայուն շինարարության բնագավառում հանրապետությունում կատարվող գիտական հետազոտությունների մասին

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Այս կապակցությամբ մենք գտնում ենք նաև, որ պետք է վերանայել «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության անունը և նրա խնդիրները: Մեր կարծիքով այդ գործակալությունը նպատակահարմար է կոչել «Սեյսմիկ դիտարկումների և երկրաշարժերին բնակչության նախապատրաստման (կամ տեղեկացման) ազգային կենտրոն»։ Սրանք տարբեր բաներ են: Սեյսմիկ պաշտպանության մեջ մտնում է ամեն ինչ, այդ թվում՝ ամենահիմնականը՝ սեյսմակայուն շինարարությունը, ինչպես նաև երկրաշարժից հետո վերականգնողական, փրկարարական, բժշկական և այլ ծառայություններ: Այս աշխատանքները ղեկավարում և համակարգում է երկրի կառավարությունը: Բոլոր սեյսմակայուն երկրներն ունեն սեյսմիկ դիտարկումների ցանց՝ հիմնականում երկրաշարժերի գրանցման, նրանց սեյսմալոգիական պարամետրերի որոշման, տվյալների կուտակման ու պահպանման համար: Ենթերկի և կառույցների տատանումներն ուժեղ երկրաշարժերի ժամանակ բոլոր երկրներում գրանցում են սեյսմակայուն շինարարության ոլորտի գիտական հաստատությունները:

Այդպես էր նաև մեզ մոտ՝ Հայաստանում՝ մինչև ՍՊԱԾ-ի ստեղծումը: Սպիտակի երկրաշարժի ժամանակ այդպիսի գրանցումները իրականացրել են «Հայսեյսմիկ» և, հիմնականում, ԳԱ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը, որը գտնվում էր աղետի գոտում՝ Գյումրիում: Այդ գրանցումները մեծ դեր են կատարել ՀՀ սեյսմակայուն շինարարության նոր սերունդի մշակման գործում: Հենց «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» ստեղծումն էր, որ բերեց շինարարական գիտության ասպարեզում մեծ հեղինակություն վայելող և փառավոր ուղի անցած Հայսեյսմիկ ԳՀԻ-ի կազմավորմանը:

Աշխարհի ոչ մի երկրում այդպիսի անվանմամբ ծառայություն չկա, այդ թվում մեր հարևան երկրներում և Ռուսաստանում: Մենք գտնում ենք նաև, որ ՍՊԱԾ-ի անվանման այս փոփոխությունը նշանակալիորեն կմեղմացնի նաև տարբեր գերատեսչությունների և մասնագետների միջև հաճախ ծագող տարաձայնությունները:

Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո, նկատի ունենալով մեր հանրապետության համար սեյսմակայուն շինարարության առաջնությունը, 1991թ. մարտի 11-ի ՀՀ կառավարության որոշմամբ շինարարության և ճարտարապետության ինստիտուտը վերակազմավորվեց սեյսմակայուն շինարարության հայկական գիտահետազոտական ինստիտուտի, (Հայսեյսմիկ ԳՀԻ) ուրի վրա դրվեցին սեյսմակայուն շինարարության հանրապետական կենտրոնի պարտականությունները, ինչպես նաև նշված ոլորտում կատարվող գիտահետազոտական աշխատանքների կոորդինացումն ու իրականացումը: Հետագայում Հայսեյսմիկ ԳՀԻ վրա կառավարության հատուկ որոշմամբ դրվեց նաև կառուցվածքների պահպանության կարևոր խնդիրը: Սակայն հետագա տարիներին կտրուկ փոխվեց իրադրությունը՝ ինստիտուտը հայտնվեց մասնակի անհատույց սեփականաշնորհվող ձեռնարկությունների ցանկում, լրիվ դադարեց-

վեց պետությունից հաշվին գիտական հետազոտությունների ֆինանսավորումը, որի հետևանքով սկսվեց կադրերի աննախընթաց արտահոսք: Դեռ ավելին, ՀՀ կառավարության 2008թ. 31 հուլիսի 864-Ա որոշմամբ օտարվեց ինստիտուտի 5726 քառ.մետր մակերեսով շենք-շինություններ, այդ թվում՝ ինստիտուտին պատկանող Երևան քաղաքի տարբեր գրուտային տեղամասերում և տարբեր հարկայնության քարե և երկաթբետոնե բնակելի և հասարակական շենքերում 1970-1995 տարիներին կազմակերպված 9 ինժեներասեյսմաչափիչ կայանները, ինստիտուտի արտադրական-փորձարարական բազան, 3.5 հեկտար հողատարածք՝ ինստիտուտի ամբողջ տարածքի կեսից ավելին: Արդյունքում ազգային ռազմավարական նշանակություն ունեցող գիտատեխնիկական հիմնախնդիրների լուծման հարցը դուրս մնաց պետական հոգածության մակարդակից:

Ներկայումս սեյսմակայուն շինարարության բնագավառում տարվող գիտահետազոտական, ազգային նորմատիվային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղություններով տարվող աշխատանքները էլ ավելի խթանելու և համակարգելու նպատակով, հանրապետությունում, ոչ մի գիտական կամ ուսումնական հաստատությունում կառուցվածքների սեյսմակայունության և սեյսմակայուն շինարարության բնագավառում հիմնարար և հատկապես փորձարարական, նպատակային, ծրագրավորված գիտական հետազոտություններ չեն իրականացվում՝ ոչ պետական բազային, ոչ էլ թեմատիկ ֆինանսավորմամբ: Եվ այս ամենը տեղի է ունենում հանրապետությունում նոր թափ ստացած շինարարության և հատկապես բարձրահարկ շենքերի շինարարության ծավալների օր-օրի մեծացմամբ, ճանապարհաշինության, ջրային տնտեսության, հիդրոտեխնիկական և էներգետիկական համակարգերի նոր, ոչ ավանդական օբյեկտների նախագծմանը և շինարարությանը զուգընթաց:

Հատկապես կուգենայի կանգ առնել բարձրահարկ շենքերի նախագծման և շինարարության որոշ հարցերի վրա: Նախ այդպիսի շենքերի սեյսմիկ ուժերի ազդեցության տակ հաշվարկման եղանակներն ու նախագծման սկզբունքները սիստեմատիկաբար կատարելագործվում են՝ տեսական և փորձարարական հետազոտությունների հիման վրա: Բարձրահարկ շենքերի նախագծումը և շինարարությունը մեծ խնդիրներ է առաջացնում մինչև անգամ ոչ երկրաշարժավտանգ երկրներում: Օրինակ, Մոսկվայում, որտեղ ուժեղ երկրաշարժեր չեն լինում, վերջերս մշակվել է բարձրահարկ շենքերի նախագծման հատուկ նորմեր: Հետևաբար այդպիսի հետազոտություններ պետք է իրականացվեն նաև մեր հանրապետությունում կառուցվող կոնստրուկտիվ լուծումներով բազմահարկ շենքերի համար: Այդ շենքերում կիրառվում են բարձրամուր, զանազան հավելումներով բետոններ, որոնց վարքը առաձգապատիկ աշխատանքի և քայքայման փուլերում փորձարարական եղանակով չեն ուսումնասիրված: Այդ պատճառով նախագծման ժամանակ օգտագործվում են սովորական բետոնների համար գործող նորմերում բերված համապատաս-

խան գործակիցները: Խոսքը վերաբերում է առաջին հերթին թուլատրելի վնասվածքների k , գործակցի արժեքներին, որոնք, մեր կարծիքով, այդ բետոնների համար պետք է ունենան ավելի մեծ արժեքներ, քան սովորական բետոնների համար: Փորձարարական ուսումնասիրությունների կարիք ունեն նաև բարձրամուր բետոնների և ամրամետրի շաղկապման, ամրանների հաջորդական կցորդման խնդիրները: Բոլոր կառուցվող բարձրահարկ շենքերի արտաքին պատերը երեսապատվում են տուֆե սալիկներով, որոնց հուսալիությունը ուժեղ երկրաշարժերի ժամանակ և երկարատև շահագործման ընթացքում բավարար չափով չեն ուսումնասիրված: Փորձարարական եղանակով չեն որոշված զանգվածային կիրառություն ստացած միաձուլ երկաթբետոնե բարձրահարկ շենքերի ազատ տատանման պարբերությունների մեծությունները, որոնք գլխավոր դեր են խաղում նրանցում երկրաշարժի ժամանակ առաջացող ինեթիոն ուժերի մեծությունները որոշելիս:

Ի դեպ, ըստ հայկական վերոհիշյալ նորմերի, բարձրահարկ շենքեր թուլատրվում է կառուցել միայն ժայռային գրունտներով շինարարական տեղամասերում: Սահմանափակվում են նաև նրանց հարկերի քանակը: Այսպես Երևան, Գյումրի, Վանաձոր, Արմավիր, Սպիտակ, Դիլիջան, Էջմիածին, Ստեփանավան և Քաջարան քաղաքների տարածքներում հարկերի թիվը սահմանափակվում է 18-ով, 16-ով և 4-ով՝ համապատասխան մետաղական, երկաթբետոնե և քարե կրող պատերով կոնստրուկտիվ լուծումներով շենքերի դեպքում:

Մեր հանրապետության համար շատ կարևոր հարց է նաև հորիզոնային Միության նախկին նորմերով նախագծված, այժմ հանրապետության ողջ տարածքում շահագործման մեջ գտնվող հազարավոր շենքերի և կառուցվածքների սեյսմազինվածության աստիճանների բարձրացման (ուժեղացման) հիմնախնդիրները՝ նկատի ունենալով հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի նոր բարձր աստիճանը: Առաջին հերթին շատ նկատի ունեն երկրաշարժերի նկատմամբ մեծ խոցելիություն ունեցող հարկաշարժի դպրոցների, հիվանդանոցների, մանկական հիմնարկների և մարդկանց մեծ կուտակումներով շենք-շինությունների առաջնահերթ ուժեղացման խնդիրները:

Ելնելով ոլորտում ստեղծված իրավիճակից և նկատի ունենալով, որ ԳԱՀ համակարգի ինժեներային սեյսմաբանության ու գեոֆիզիկայի, երկրաբանական գիտությունների և մեխանիկայի ինստիտուտների գիտական հետազոտությունների ուղղություններում նույնպես ընդգրկվել են սեյսմակայուն շինարարության հիմնախնդիրները, հիմնահարցի արդյունավետ լուծմամբ մտահոգված, մենք գտնում ենք, որ հանրապետությունում կառուցվածքների սեյսմակայունության և սեյսմակայուն շինարարության ուղղությամբ գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական աշխատանքներն արդյունավետ կերպով իրագործելու համար նպատակահարմար է դիմել ՀՀ կառավարությանը՝ ստեղծել սեյսմակայուն շինարարության գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական հանրապետական կենտրոն (ՊՈԱԿ) ԳԱՀ համակարգում՝ ՀՀ կառավարության 1991թ. մարտի 11 թիվ դ 199 որոշմամբ հաստատված հիմնական գիտական ուղղություններով: Մասնավորապես այդպիսի կենտրոն, մեր կարծիքով նպատակահարմար է ստեղծել Հայսեյսմիկ ԳՀԻ և ԿԴ դեռևս պահպանված պետական մասնաբաժինը ԳԱՀ համակարգ տեղափոխելու միջոցով:

Էդուարդ ԽԱՉԻՅԱՆ
- ՀՀ ԳԱՀ ակադեմիկոս

ՄԻ ԼՈՒԽԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Պրոֆ. Վերժինե Սվազյան, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզի, «Արմենիա» հյուրանոց, Եր., 6 հոկտ., 2011

